

# ՈՐԻՍՍԱՅԱՅԻՇԽԵԱՆ ՆԱՀԱՊԵՏԸ

(Սա. Նազարեանցի գործութեան ուրբագիծը)

## I

Թէպէտ մնաք կազմում ենք մի փոքրիկ ազգութիւն, թէպէտ մեր կեանքը դժգոյն է և աղքատիկ, բայց և մնաք ունեցել ենք երախտաւոր գործիչներ, որոնք մշակել են մեր մտաւոր անդաստանը, բացել են մեր առաջ գոյութեան նոր շաւիղներ։ Մեր մերձաւոր անցեալը յարուցել է շատ խնդիրներ, որոնք ուսանելի են և մեր օրերի համար, Գիտակյական կեանքը պահանջում է ուսումնասիրել աչ միայն ներկան, այլ և այն աղբւրները, որոնցից նա բղխել է, արիւն և մարմին է ստացել Անցեալի գործիչների դաւանանքները, նրանց զեկավարող իդէաները, նրանց գործելու եղանակը, այդ բոլորը մի կենդանի դրաց է, որի ուսումնասիրութիւնը և օգտակար է, և պարտադիր մեզ համար։

Մեր ժամանակը, որ աղքատ է իդէաներով, կարող է շատ բան սովորել վաթսունական թուականների մշակներից։ Նրանց ջանքերով է կենդանացել մեր կեանքը, նրանք են առաջացրել այն մտաւոր հոսանքը, որ մերթ խաղացկուն էր և կարկաչուն, ինչպէս վտակ, մերթ մանչող էր և փրփրուն, ինչպէս լեռնային ջրվէժ։ Ոգեսորուած աղքաշնութեան վեհ գործով հայ մտածողները ձեռք էին զարկել տենդային աշխատանքի։ շատ տէդ ու նիզակներ են ջարդել նրանք, շատ եռանդ ու խելք են բանեցրել իրանց դատը առաջ տանելու համար։

Այդ գաղափարական շարժման գլուխ էր կանգնել զիտնական Ս. Նազարեանցը, որ, կարելի է ասել, ոսւսահայերի հրապարակախոսութեան նահապետն է։ Թէ իր կենդանութեան ժամանակ, թէ մահից յետոյ՝ նա եղել է խիստ յարձակումների ենթակայ, բայց ունեցել է և շատ պաշտպաններ։ Անողորմ

դանուեց գէպի նա Աղ. Երիցեանը «Փորձ» ամսագրի էջերում.  
Նրան հակառակ՝ ջատագով հանդիսացաւ Ս. Շահազիզեանը իր  
«Հրապարակախօս Զայն» աշխատութեան մէջ: Երկուան էլ խո-  
շորացոյցով քննեցին գիտական հրապարակախօսի գործերը.  
մէկը գիտեց միայն թերութիւնները և եկաւ այն եղբակացու-  
թեան, որ Ս. Նազարեանցը պիրու հրապարակախօս համապա-  
տասխան չէր իր կոչմանը, իսկ միւսը, միայն արժանիքներ ու-  
րսնելով հոչակեց նրան «Պոոմէթէոս», գործիչի կատարելատիպ:

Աղ. Երիցեանը, նեղ կուսակցական ոգւով տոգորուած, լի-  
նելով հակառակ հայեարքների տէր մարդ՝ զրօյի հաւասարեց Ս.  
Նազարեանցին: Նա չը բարեհաճեց անշաշառութեամբ քննել նը-  
րան, դրեց նրա գործունէութիւնը ժամանակից և տարածու-  
թիւնից գուրս, որպէս զի նսեմացնի իր հակառակորդի վաս-  
տակները, մոռանալով որ չը կայ անպայման կատարելութիւն,  
ուր մնաց մի հրապարակախօս, որ սերտ կապ ունէր իր ժա-  
մանակի հետ և առաջինն էր փորձ փորձել՝ թօթափելու հնու-  
թեան փոշին: Եթէ «Հիւսիսափայլը» շուտ դադարեց իր գոյու-  
թիւնը շնորհիւ խաւար ոյժերի դիմագրութեան և հասարա-  
կութեան անտարբերութեան, եթէ նրա զեկավարը չը կարո-  
ղացաւ մշակել գործունէութեան աւելի բէալական ծրագիր,  
այդ դեռ չի նշանակում, թէ նա համապատասխան չէր իր կոչ-  
մանը: Ա. Երիցեանը նեղութիւն չը քաշեց զեկավարուելու այս  
տեսակէտով. նա շատ բան ճիշտ լուսաբանեց, մերկացրեց Ս.  
Նազարեանցի շատ թերութիւններ, բայց չըմբոնեց նրա հրա-  
պարակախօսութեան էութիւնը, նրա բուն քաղաքացիական դա-  
ւաննքը, նրա արշաւանքի խորհուրդը կղերականութեան դէմ,  
որը ճնշում էր հայի հոգենոր ոյժերը. նա չուզեց հասկանալ, որ  
հրապարակախօսական կոչումից զուրկ» գրողը չէր կարող ուտ-  
քի կանգնեցնել հասարակութեան մտածող մասը, կենդանացնել,  
նոյն իսկ ալէկոծել մեր խաղաղ կեանքը, եթէ չունենար կեն-  
սունակ իդէալներ. քննադատը չափազանց շղթայուած էր այն  
հայեացքով, որ «կրօնը հայոց համար միակ փրկարար միջոցն  
է մեր պատմական անցեալի անջատած օղը ձեռք բերելու հա-  
մար»:

Երբ մենք կամենում ենք հասկանալ մի գլուխի, կազմել  
նրա մասին լիակատար գաղափար, պէտք է քննենք նրան ա-  
ւելի բարձր տեսակէտից, քան նեղ կուսակցական դաւաննքը,  
և աւելի մեծ բարձրութիւնից, քան ծխական զանգակատունը:  
Բաւական մեղանչեց այս սկզբունքի դէմ և Ս. Շահազիզեանը:  
Նա բողոքեց Երիցեանի միակողմանիութեան դէմ, չը դուաւ նրա ասածների  
քննադատի ոչ մի նկատողութիւն, չը դուաւ նրա ասածների

մէջ ճշմարտութեան ոչ մի նշոյլ, և զայրանալով անուանարկեց նրան՝ «թաթար մէյդանի կինոտ», «անիրաւ չարախօս», «կաշառուած կրիտիկոս», «գիւղական պքաղաղը» և այլն մականուններով, և այդպիսով ինքն ևս ընկաւ միակողմանիութեան մէջ... Աշխատենք, ուրեմն, մի քանի բնորոշ գծերով ցոյց տալ Ա. Նազարեանի գործունէութիւնը, չը հետեւելով այս երկու ծայրայեղութիւնից և ոչ մէկին:

## II

Ստ. Նազարեանցը իր ժամանակի համար յայտնի արեւելագէտ էր. նրա աշխատութիւնները արեւելսան գրականութեան մասին, մանաւանդ թարգմանութիւնները պարսկերէնից (Ֆիրդասուսի և Սաադղի), ունեցել են կարեւոր նշանակութիւն, և, գուցէ, պահպանած լինեն մինչև այժմ իրանց արժէքը: Ժրազան գիտնականը շատ բան է գրել և ամեն կերպ աշխատել է նըսպաստել իր աղջի մտաւոր-բարոյական վերածնութեան. վառուած քաղաքացիական պարտաճանաչութեան զգացմունքով նա ջանք չի ինսայն զարթեցնելու քնած աղդային միաթը և լոյս ներմուծելու մեր խաւար կեանքի մէջ: Բացի մասնագիտական ուսումնասիրութիւններից՝ միայն «Հիւսիսափայլը ամսագրում նա գրած ունի հարիւր երկու յօդուած, որոնցից քսանը թարգմանական վէտեր են, իսկ մնացնեանները շօշափում են բարոյական-փիլիսոփայական, պատմական-քաղաքական, բնագիտական և մանկավարժական իմացիրներ. նա աշխատանքի կատարեալ մարմնացում էր և, կարծես, երբէք ձեռքից բաց չի թողել գըրիչը:

1851 թ. նա լոյս է ընծայում մի գիրք «Յաղագս փորձական հոգեբանութեան ճառ» վերնագրով. սա նրա առաջին աշխատութիւնն է հայերէն լեզուով: Անկասկած, հոգեբանութիւնը, իբրև մի ուսմունք, որ խօսում է հոգու այլեայլ գործողութիւնների, յատկանիչների և կազմութեան մասին, կարեւոր նիւթ է. բայց դա մի անհասաննելի իմաստութիւն էր այն հասարակութեան համար, որի պէտքերին էր նուիրուած, դա մի ապարդիւն դործ էր տարրական կրթութիւնից զուրկ, «այրբենագէտ» ժամանակակիցների համար: Ռվ պիտի կարդար գրաբար գրուած «հոգեբանութեան ճառը»: Տգէտ հայ ծնողը կամ մանկավարժ տիրացնեն, որ բացի անուս լինելուց՝ մտավախութեամբ բռնուած չինացի էր. հայ ինտելիգենտը, որ կարօտ չէր այդ տեսակ գրուածքին, իսկ հարկաւոր դէպքում՝ կը կարդար աւելի լուրջ հետազօտութիւն, քան այդ անաջող, կիսով չափ

թարգմանական ձեռնարկը Ռւբեմն ինչ նկատումներով է գրուած «Հոգեբանութեան ճառը»։ Մենք հաւասարի ենք, որ հեղինակը ունեցել է բարի նպատակ. պարզ է միենայն ժամանակ, որ զատեսական մտածութիւնների արդիւնք է, անփորձ զիտնականը չէր կշռել այն հանգամանքը, թէ այդ գրութիւնը մի շայլութիւն էր իր ժամանակի համար. բայցի այս՝ մի օտարութի զգացմունք էլ է զեկավարել իրան, ինչպէս այդ երևում է զրբի առաջարանից։ Մի քանի դատարկամիտ մարդիկ իրանց մասնաւոր նամակներում ասել էին, թէ Ա. Նազարեանցը զրաբար չը գիտէ, —իսկ դա ժամանակի հասկացողութեամբ հաւասար էր տոփտութեան, —և ահա մեր խայթուած զիտնականը ճգնում է ապացուցանել, որ դա զրպարտութիւն է, և իր հեղինակութիւնը վերականգնելու նպատակով լոյս է ընծայում «Հոգեբանութեան ճառը»։ Զարժէր զրա համար զրել մի ամբողջ զիրք «Ժանգուեալ լեզուով» և այն էլ ընդդէմ սեփական հայեացքների. դա ցոյց է տալիս, որ և լուրջ մարդիկ յաճախ ունենում են տարօրինակ թուլութիւններ. դա միենայն ժամանակ և վերջին տուրքն էր, որ վճարում է «նորասէր» զիտնականը զրաբարի տիրապետութեանը։

«Հոգեբանութեան ճառից» յետոյ Ա. Նազարեանցը հանդէս է գալիս մի շարք դասական ձեռնարկներով՝ «Վարդապետարան կրօնի» (1858 թ.), «Ալուաջին հոգեղէն կերակուր հայազգի երեխանների համար» (1858 թ.), «Հանդէս նոր հայախօսութեան» (1857 թ.). սրանք բոլորը հեղինակի անխոնջ ջանասիրութեան և հայրենակիցների օգտին ծառայելու բուռն ցանկութեան արդիւնք են։

«Հանդէս նոր հայախօսութեան» երկհատոր զիրքը մի հոկայական աշխատանք է ըստ ծաւալի, բայց շատ թերի է ըստ կատարման. դա մի խանափնթոր հաւաքածու է, որ բաղկացած է պատմական, զիցարանական, զրականական նիւթերից և կազմուած է առանց մեծ ճաշակի և սիստեմի. նրա մէջ կան հարիւրաւոր յօդուածներ՝ և՝ «համճարեղ ասացուածք», և՝ «քաջափրտ ու զօրաւոր խօսուածքներ», և՝ «քարք ու վարք պատկերացնող պատմութիւնք», և՝ «զանազան խորհրդաւոր պատմութիւնք», և՝ «զուարճալի ու սրամիտ զրոյցներ», և՝ «արմելեան առասպելներ», բայց այդ յօդուածների մեծամասնութիւնը հասկանալու համար անհրաժեշտ էր բաւականաչափ պատրաստութիւն ունենալ Հոռմի և Յունաստանի պատմութիւնից, հարկաւոր էր հեղինակի խրթին և արուեստական լեզուին ընտեխնալ. հանգամանքներ, որոնք գժուարացնում էին նրանց ընթերցանութիւնը ոչ միայն մանուկներին, այլ և հասակաւոր-

Ներին, Զը նայած այս թերութիւններին՝ «Հանդէս նոր հայախօսութեան» գիրքը իր ժամանակ մի ուշագրաւ, մի նոր երեսյթէ էր մեր աղքատիկ դրականութեան մէջ թէ իր ոգւով և ուղղութեամբ, թէ նիւթերի առատութեամբ և բազմատեսակութեամբ:

Այս աշխատութիւնները Ս. նազարեանցի առաջին գրականական գործերն են. դիտող աշքը չի կարող չը նկատել նըրանց մէջ մաքերի թարմութիւն, նոր բուրմունքների նշոյներդիմական հրապարակախօսը հաստատ վճռել է գնալ տիրապետող հոսանքների դէմ և աւետել նոր խօսք. այդ գրուածքները մի տեսակ նախերգանք էին այն գատի, որ պիտի սկսէր «Հիւսիսափայլը», սակայն նրանք չեն Ս. նազարեանցի համբաւի աղքիւրը. նա նշանաւոր է մեզ համար ոչ իր գրականական վաստակներով, ոչ էլ իր դոկտորական տիտղոսով, այլ իրքն հրապարակախօս և քարոզիչ եւրոպական հասկացողութիւնների. նա ունի պատուաւոր դիրք մեր դրականութեան մէջ ոչ իրքն գրականական տաղանդ, այլ իրքն պարագուիս վաթսունական թուականների գողափարական շարժման, իբրև լուսամիտ քաղաքացի, որ կոչ էր անում դէպի նոր կեանք:

## III

Վաթսունական թուականները մի դրագուիս են կաղմում մեր ինքնադիտակցութեան պատմութեան մէջ. այդ յիշատակելի ժամանակի մտաւոր-բարոյական ժառանգութիւնն է, որ մինչև օրս շարունակում է յուղել հասարակական միավը.

Ցայտնի է թէ ինչ կենդանութիւն, վերանորոգչական բուրմունք էր տիրում Եւրոպայում և Ռուսաստանում, երբ կերպարաննում էր մեր ինտելիգենցիայի առաջին սերունդը. յայտնի է նոյնագէս «Երիտասարդ Գերմանիայի» ազգեցութիւնը, որ Դօրբագի հայ ուսանողութեան միջոցով մուագ գործեց և մեր կեանքում: Մեր ինտելիգենցիան էլ ներազդուելով ժամանակի ոգւով, սկսում է խորհել իր հայրենիքի վերաշնութեան մասին: Օտար աղգերի առաջադիմական ընթացքը, նրանց մըըրկալից ձգտումը դէպի հասարակական ինքնագործունէութիւն, քաղաքացիական աղատութիւն՝ յուղում են և մեր երիտասարդ մաքերը. հայ մտածողը «Պատառութիւն» է գոչում և իր «անզօր թեերով աղատութիւնն» է գրկում:

Հայ բանաստեղծ պատամին խիզախում է վրդովել իր հայրենիքի քաղցր ճիրիճը և, տեսնելով նրա լացն ու կոծը, նրա դարդն ու աղի արտասուքը՝ լցում է աւելի քնքոյշ կարուով դէպի իր սգաւոր մայր-երկիրը, որի անցեալը խաւար

գիշեր է և ներկան՝ անապատ. ահա լսում է նրա աւերակների միջից մի թարմ, եռանդուն ձայն, որ ասում է.

«Հայկ ու Լեռնին մոռանանք, եղբարք,  
Թափ տանք մեզանից փոշին հսութեան,  
Վերածնենք մոր մէջ նոր կեանք ու նոր բարք...

Հայ գիտականը քաղաքացիական պարտք է համարում իջնել գիտութեան բարձունքից, խօսել իր վշտարեկ «մօր խօսքը».

Հնչիր դու, հնչիր այժմ և յաւիտեան,  
Մայրենի լեզու, բարբառ սիրական,  
Արի, բարձրացիր հնութեան փոշոց,  
Ըզգեցիր նոր կեանք սուրբ գրուածներով,  
Որ ամենայն սիրտ վառուի քո սիրով:

Խնտելիգենցիայի այս ներքին տրամադրութեան արգասիքը լինում է «Հիւսիսափայլ» ամսագրի լոյս աշխարհ գալը (1858) ղեկավարութեամբ Ստ. Նազարեանցի, ամսագրի, որ դառնում է արտայայտիչ հայ մաքի լաւագոյն ներկայացուցիչների. ոգևորուած ժամանակի առաջադիմական զաղափարներով՝ ասպարէզ են գալիս մեր հոգենոր զարնան առաջին գուշակները. կենդանի իրականութեան շահն էր նրանց առաջնորդող ոյժը, հայրենիքի վերածնութիւնն էր նրանց բաղձանքը:

Տխուր պատկեր էր ներկայացնում մեր իրականութիւնը այս պատմական ժամանակամիջոցին. Հասարակութիւնը գտընուում էր ինքնազիտակցութեան ողորմելի վիճակի մէջ. հայ փողաւորը և նրա արբանեակ հոգենորականը իրերի տէր էրն հանդիսանում, հասարակական կարծիք կազմում Ազգային գաղափարն ամփոփւում էր եկեղեցու մէջ, հայութիւնը՝ քրիստոնէութեան մէջ. Հայ քաղաքացին համոզուած էր, որ ամեն ինչ կատարեալ է իր շուրջը և ոչ մի կարիք չը կայ մի մազաշափ անգամ փոփոխելու պապերից ժառանգած հասկացողութիւնները. Ազգասէրը նա էր, որ ծածկում էր ազգային արատները, խսկով վստահանում էր նոյն իսկ թեթեակի խօսել տիրող կարգերի դէմ, նա անպատկառ և ըմբոստ էր հոչակւում:

Գրականութիւնը ներշնչուած էր կղերական ոգւով. հասարակական միտքը շղթայուած էր կղերական հայեացքներով և արտայայտում էր կրօնական վէճերի և բարոյական դատողութիւնների մէջ. Գրականական և ուսումնական լեզուն գրաբարն էր. լուսաւորուած նա էր, ով գրաբար գիտէր, և որքան խրթին էր գրում նա, այնքան ընտիր էր համարւում նրա լե-

զուն: Լուսաւորութեան շտեմարան էին համարւում «Դեղ կենաց», «Մաղիկ գիտութեանց» \*), «Ծրագ ճշմարտութեանց», «Թէսաւրոս» և օրանց նման բարոյախօսական գրքերը:

Ողորմելի էր և ազգային լուսաւորութեան վիճակը: Ուսաման մատակարարը հոգեորականութիւնն էր, որ ինքն էլ զուրկ էր տարրական կրթութիւնից, ուսանելի առարկանները սաղմուն էր և Նարեկացին, մի կտոր քերականութիւն և ճարտասանութիւն, մի փոքր էլ հայոց պատմութիւն. տիրացուվարժապետները ոչ մի գաղափար չունէին մանկավարժութեան մասին: «Վիալախան», ուաքերը կաշկանդող այդ գործիքը, և «աջահամբոյրը», որ տրւում էր այն դէպքում, երբ աշակերտը ստանում էր իր ուսուցչից ընթերցանութեան նոր գիրք, ահա դաստիարակութեան գործոնները, որ հնարել էր ժամանակը: «Մեր ազգը», — ասում է Ռ. Պատկանեանցը իր «Աղջային երգարանի» յառաջաբանում, — տակաւին երեխայ է. նա կարօտ է հմուտ և անկողմնապահ դաստիարակների, որոնց բարի խրատով պիտի ուղղէ իր գողգոջուն քայլերը. դժբախտաբար, այդ մանկավարժները իրենց սովոր տգիտութեամբ, անընկծելի յամառութեամբ, նախանձով և չարակամութեամբ այսպէս նախապաշարել են իրանց ձեռնասուններին, որ սոքա մինչև այժմ խօսում են նոյնը, ինչ որ կէս դար առաջ իրանց շառատան դաստիարակիչներից և ինչ որ մի անգամ տպաւորուել է նոցա թեթև խելքի մէջ»:

Հայ ծնողների միծամասնութիւնը դեռ ևս շոայլութիւն էր համարում ուսումը. նա կարծում էր, որ լուսաւորութիւնն անհրաժեշտ է մի տիրացուի, քահանայի կամ վիլխոտիայի, իսկ ով չի պատրաստում այդ կոչումների համար, դա մի ապարդիւն ժամապահառութիւն է: Հայ ընտանիքը ունէր նոյն նահապետական կերպարանքը, ինչ որ դարեր առաջ. հայ կինը նոյն հարճն էր և իր ամուսնու հաւատարիմ կողակիցը՝ անկամ և ճնշուած:

Այսպէս էր իրերի գրութիւնը, երբ հանդէս եկաւ Ս. Նաղարեանցը իր «Հիւսիսափայրը»ով. Քաջ իմանալով, որ հայը տգէտ է և անկիրթ, նա ստանձնում է ուսուցիչ-դաստիարակի պաշտօնը և ամեն կերպ աշխատում է լայնացնել նրա մտաւոր հորիզոնը. նրա աչքում հասարակութիւնը ուսումնառու աշակերտների մի բազմութիւն է. «Թնդ հայը», — ասում է նաև — նստի այն աշակերտական սեղանի վրայ, որից պատճառ չունի ամաչելու ոչ մանուկը և ոչ հաստակաւորը. դա մեր ամենեցուն պաշաճաւոր տեղն է: Նա քննոյշ սիրով սիրում է իր աշակերտ-

\*.) Մերովիէ վարդապետի պատկերազարդ հաւաքածուն:

ներին, բայց և չի թագղնում նրանց թերութիւնները. նա անխնայ մերկացնում է հասարակութեան արատներն ու տկարութիւնները և մտադիր է բժշկել նրան էական միջոցներով, ինչպիսի ցաւ էլ պատճառելու լինի իր բժշկութիւնը. նա բացարձակ յայտնում է, թէ «հայոց ազգի մարմինը ունի իր վրայ ապականուած տեղեր. դրանց քննել անշառապէս և ի բաց կըտրել առւր դանակով չպիտի վախենայ գիտութիւնը և մարդկութեան բարեկամը. թող հիւմնդը ցաւի և գանգասէ. թող կարճամիտը և հիւմնդի մերձաւորքը հառայիռոց բարձրացնելով հայհոյեն բանագէտ բժիշկը... Բայց այդ լաց ու կոճը չպիտի խափանէ բժշկութեան գործը, որչափ ծանր լինէին այն պայմանները, որսնց մէջ վիճակուել է հայկական բժշկին գործ գնել իր ճարտարութիւնը... Նա լայն է հասկանում իր հասարակական գերը և գիտակցում է, որ ազգային շէնքը հսացել է, որ հասարակական կեանքն ընթանում է կորստաբեր ճանապարհով, որ հարկաւոր է վերպանել հին սկզբունքներն ու աւանդները, նախապաշարմունքներն ու մոլորութիւնները և կառուցանել նոր ազգային շէնք և ըրոպական քաղաքակրթութեան հաստատուն հիմքի վրայ:

Նոր էր այս իդէալը և նրան դաւանող ամսագրի առաջին լուրը իրարանցում է առաջացնում աւանդապահների բանակում. նրանք ուագի են կանդնում, մտածելով՝ մի գուցէ խախտուի իրանց հեղինակութիւնը, լարում են իրանց ոյժերն «անկաչ» հրապարակախօսի դէմ մաքառելու համար և հիմնում են «Մեղու Հայաստանի» լրագիրը խմբագրութեամբ Ս. քահ. Մանդինեանցի (1858թ.). Խանգարուում է հնութեան քաղցր հանգիստը. այժմ նա լիովին ներչնչուած է անձնապաշտպանութեան զգացմունքով, այժմ նա սպասում է իր յանդուգն թշնամու գործողութիւններին:

Վստահ և համարձակ է դուրս գալիս կոուի դաշտ Ս. Նազարեանցը և իր նոր գործի պաշտպանութիւնը սկսում է աշխարհիկ բարբառի դատով, բարբառի, որ գգոեհիկ անունն էր կրում. նա սկզբունք է յայտարարում, որ եթէ գիտութիւնը և գրականութիւնը գոյութիւն ունեն հասարակութեան համար, նրանց լեզուն էլ մատչելի պիտի լինի ընդհանրութեանը. իր ամսագրի առաջին տետրակում նա գրում է մի ընդարձակ յօդուած «Հայկական լեզուի խորհուրդը» վերնագրով, որի մէջ ասում է, թէ «հայոց ազգի տունը պիտոյ է շինվի նրա լեզուի շինութեամբ. լեզուն է, որ անապաները շինել է բարեկարգ քաղաքներ և առաջացուցել է արուեստ և գիտութիւն, հազարաւոր գիւտեր և հնարներ... հայը պարտական է համարել իւր

լեզուն իւր ամենասուրբ բանը, իւր աչքի լոյսը, իւր սրտի արինը, իւր կենդանութեան հիմքը, իւր պատիւը և պարծանքը... երբ մի ազգ ժամանակի հետ յառաջ խաղալով փոխում է կեանքի պայմանները, այսուհետեւ այդ կեանքի համար պիտոյ է նա ծնուցանէ և նոր ձևեր, նոր կերպարանքներ. պատճառ նոր հոգին կամի և նոր ձև...».

Գրաբարը տարիների ընթացքում հասել էր զառամեալ հասակին և անկարող էր դարուս քաղաքակրթութեան արտայայտիչ լինել. նա անհասկանալի էր ժողովրդին. նա կատարել էր իր մայրական պարագը և ակամայ պիտի զիջանէր տիրապետութեան իրաւունքը կենդանի աշխարհաբարին. Այս պարզ ճշմարտութիւնը գրգուռում է հնասէրների զայրոյթը. նրանք չեն ուզում հաօկանալ, որ լեզուն անցնում է զարգացման նոյն աստիճաններով, ինչ որ իւրաքանչիւր կենդանի էակ, որ նա ազգային ոգու արտայայտիչն է, ժողովրդի ստեղծագործութեան մշակն է՝ մի դեր, որ անզօր էր կատարել գրաբարը.

Ազապէս թէ այսպէս՝ անէծք ու նզովքներ են թափում «լուսովարաք» գիտնականի գլուխն. Նրա սկսած դատը հոչակւում է յանդուգն արշաւանք դարերից սրբագործուած աւանդների դէմ, անպատկառութիւն «կրօնի և բարեպաշտութեան» դէմ Ա. Արարատեանը իր «Դիմագրաւ ընդդէմ սատան յարուցելոյ ամենապատուական լեզուիս հայց» գրքով բողոքում է Ա. Նազարեանցի «անվայել արարքի» դէմ, «ազանդաօարաս և դաւանան» է անուանում նրան, «կործանիչ կրօնի և ազգային պարծանքի», որ համարձակուել է թաղել Շնախատեղծ Աղամի լեզուն»։ Սակայն հին լեզուի պաշտպանների վայնասունը տպաւորութիւն չի գործում. դա անզօր ծերութեան հառաջ էր։ Մանուկ, թոթովպախոս լեզուն ազատ հնչում է և ճիգ է թափում հարթել իր փշոտ ճանապարհը։

Ս. Նազարեանցը աջողութեամբ փաստաբանեց նրա իւրաւունքները և կանգնեց նրա տիրապետութեան զրօշը, Բայց արդեօք աջողութել է նրան տալ մեզ իր տեսական հայեացքներին համաձայն կենսունակ լեզու. Դժբաղդաբար, ոչ գուցէ այդ հանգամանքը մասամբ բացատրում է նրանով, որ նոր գրականական լեզուն ենթակայ էր «աճման հիւանդութիւններին» և իր մանկութեան պատճառով չէր կարողանում եւրոպական մտքի բաւարար թարգման լինել, բայց և անկասկած է, որ նրա պաշտպան Ա. Նազարեանցը չափազանց ակադեմիկաբար վերաբերուեց իր զրած հարցին. նա դեռ չէր ազատուել զրաբարի հիացմունքից և բարձրից էր նայում ժողովրդական լեզուի վրայ։ «Դրոց լեզուն, —ասում է նա, —մի պերճ թագա-

որ է, և աշխարհաբարը, ինչպէս սա գործ է ածւում ռամիկի քերանում, հազիւ թէ արժանի է նրա ոտքը համբուրելու։ Նա հրաժարւում է գրազմութեան վայրենացած լեզուից և երազում է մշակել գրազաքացի հասարակութեան մէջ գործածական աշխարհաբարը, բայց դա էլ լոկ տեսական իղձ էր, որ չաղողուեց նրան իրագործել ։ Նա ձեռք է վերջնում գրաբարից, որի «հանդէսը անդառնալի վերջացել էր», բայց և չի մօտենում ժողովրդականին, որ թւում է նրան գուեհիկ և վայրենացած։ Նա հիմք է առնում զրոց լեզուն և աշխատում է նրան արուեստօրէն ժողովրդականացնել, մինչդեռ աւելի բնական կը լինէր մշակել կմնդանի աշխարհաբարը, կանոնաւորել և ճոխացնել նրան, օգտուելով հին լեզուի ճարտարապետական ձևերից և պիտանի նիւթերից։ Մեր նոր գրականութեան նահապետ Խ. Արովեանցը արդէն արել էր տառջին փայլուն փորձը իր «Վէրք Հայաստանի» երկով. դա մի սրտառուչ դարձ էր գէպի ժողովուրդը, մի բնական ճանապարհ, որ կարող էր արագացնել գրականական լեզուի զարգացումը։ Նոյն իսկ Մ. Նալբանդեանցը, քննելով «Հանդէս նոր հայեախօսութեան» զիրքը՝ անուանում է հեղինակի լեզուն «աշխարհաբարախառն գրաբար» և ցանկութիւն է յայտնում առաւել ժողովրդականացած տեսնել նրա լեզուն, որ աւելի մօտ է գրաբարին, քան կենդանի բարբարին։

Հուրջ էին Ս. Նազարեանցի հայեացքները լեզուի զարդացման օրէնքների մասին, բայց նա չէր իմանում գործադրել նրանց։ Նա դարբնում էր լեզուն ըստ իր քմահաճութեան և մոռանում էր, որ նրա բուն հեղինակը ժողովուրդն է. սա է տալիս այն առողջ նիւթը, որ կոկում է և ճոխացնում բանագէտ դրողը. քանքարաւոր հեղինակը իր ստեղծագործող հանճարով զտում է և մաքրում նրան իր արհեստանոցում։ Ս. Նազարեանցը զուրկ էր այս ձիրքից. Նա հատորներ է գրել, բայց չի տուել մեզ այնպիսի լեզու, որ ունենար հետեղներ. նրա ոճը ճապաղ է և ծանր. նա չը գիտէ կարճ և ամիով գրել բայց նրա գրականական խօսքը յաճախ աղջու է և կտրուկ չնորհիւ այն կրակի, որ նա ունէր իր բարախուն սրտում, շնորհիւ իր անսասան համոզուածութեան և գաղափարականութեան. նա գրական չէր (լիտերատօր), այլ մտքի մշակ էր.

## IV

Ս. Նազարեանցը բացասարար էր վերաբերւում գէպի մեր իրականութիւնը. մտածող քաղաքացին չէր կարող հաշ-

տուել այն անշարժութեան հետ, որ ճակատագրային կերպարանք էր ստացել մեր մէջ. նա տեսնում էր, որ հայը չափազանց կղերամիտ է ժամանակի հարցումները հասկանալու համար, որ հոգեսոր դասակարգը բռնացել է հասարակական մտքի վրայ և կաշկանդել է ազգային ոգին. Ազգի պատմական անցեալը պատկերանում է նրա առաջ ինչպէս ալէծուփ ծովի մէջ խորտակուած մի նաւ, որի բեկորները դուրս են ընկած ժայռի վրայ, ազգային վիճակը՝ մի անապատ, որ պէտք է մշակել և ծաղկեցնել. Ազգու է և որոշ նրա գործունէութեան բնաբանը, որ մենք կարդում ենք «Հիւսիսափայր»-ի ճակատին. «Այսուհետև ոչինչ եղիպտական խորամանկ քուրմեր, որ կամէին լինել գիտութեան միակ պահապանքը. այսուհետև ոչինչ չինչական պարիսպ, որ պիտոյ է փակէր լուսաւոր դաղափարների մուտքը ազգերի մէջ. այսուհետև լոյս և ճշմարտութիւն և ազատութիւն խաւարի բարեկոնեան գերութիւնից»: Դժուար էր աւելի պարզ և կտրուկ արտայայտել մի գործունէութեան ծըրագիր: Այստեղ կենդանի կանգնած է մեր առաջ ամբողջ նազարեանցը իր պարզ հոգւով և արի բնաւորութեամբ:

Նրա մտրակը ուղղուած է հոգեսրականների դէմ, որոնք եղիպտական քուրմերին յատուկ խորամանկութեամբ քօղարկում էին իրանց տգիտութիւնը գիրուն բարոյախօսութեամբ և իրանց կասկածելի իմաստութիւնը՝ մեռած զրաբարով:

Կղերն ի ընէ մեր մտաւոր-բարոյական վիճակի կարգադրիչն էր. նա էր մեր ուսուցիչը և խնամատարը. դարերի ընթացքում նա դարձել էր ազգային մաքի միակ ուղղիչը: Սա մի չարիք էր, որ պահում էր մեզ մի կախարդական տեղում և արգելում էր մեր հոգեսոր ոյժերի զարգացման: Ժամանակակիցներից բարձր կանգնած Ս. Նազարեանցը, լաւ հասկանալով այս՝ արշաւանք է սկսում մեր խնամատարների դէմ և պահանջում է նրանցից կենդանի գործ: «Թող հոգեսրականութիւնը, — ասում է նա, — դուրս գայ իւր միջին դարերի կապանքից, թող բացուի նրա բերանը... և կենդանացնէ Աստուծոյ բանը ժողովրդի մէջ»: Նա բուռն եռանդով քարոզում է, որ առաջադիմել ուզող ազգը ինքը պիտի հոգայ իր կարիքները, ապաւնի իր ոյժերին, նախաձեռնութիւն ցոյց տայ իր գործերի մէջ և իր աշխատանքով մաքի ճանապարհ բաց անի. Ենքը ազգային հասարակութիւնը պարտական է պատրաստել իւր ուսուցիչը, եթէ չկամի, որ ամբարիշտ մարդիկ իւրեանց խաւարի թշուառ սպասաւորներով օձի ձագեր մնուցանեն ազգի համար, կամ թէ իւրեանց գաղափարներով մեռուցանեն հայոց զաւակների հոգին և սիրաը. ազգի լուսաւորութեան անդաստանը պի-

առյ է գործել աղդի հարազատ ձեռքով և ոչ թողուլ աբեղաների կամքին... չկայ այսուհետեւ աբեղաներին դործ աղջային ինդիրների մէջ. ժողովուրդը կարօտ է այժմ այլ ուսուցիչների, բայ թէ կարող էր տալ նորան խուցերի մէջ փակած, մարդկութիւնից տարացած մի հասարակութիւն։

Ունէր արգեգք Ս. Նազարեանցը լուրջ հիմք այսպիսի մեղադրանքներով արշաւելու մի դասակարգի գէմ, որ միծ դեր է խաղացել մեր պատմութեան մէջ։ Անկասկած, այս քաջ գիտէր, որ հոգեորականութիւնը տուել է մեղ զրականութիւն և եղել է միշտ մեր անջատուած ոյժերի կապակցող օդակը, բայց գիտէր նոյնպէս, որ նրա ժառանգութները անարժան հովիւներ են իրանց հօտի, առանց վաստակի փառք պահանջող, առանց պարտականութիւնների իրաւունքներ բանեցնող։ Ս. Նազարեանցը յայտնում է, թէ «մեր եկեղեցին կարօտ է մի աղդու վերանորոգութեան աւետարանի հաստարմատ հիման վերայ. նորոգութիւն աւետարանի լուսով, նորոգութիւն դիտութեան զօրութեամբ». սա չէր նշանակում փոփոխել եկեղեցու դաւանութիւնները, սրանով առաջարկուում էր միայն կրթել նրա տգէտ պաշտօնեաններին և հաստատել մեր մէջ աւետարանի վարդապետութիւնը։

Ցաւն այն չէր, որ փշացած, շահախնդիր մարդիկ օտարաւնում էին մեղանից. նրանց համար ոչ կրօն կայ, ոչ աղգութիւն, միայն թէ պարարուի իրանց մարմինը. «թնդ աղգային ծառի անպիտանացած ճիւղերը բաժանուեն նրանից»։ ցաւն այն էր, որ գիւղացիններն էլ ուրանում էին մայրենի եկեղեցին, մի տարր, որ պաշտպանել է իր կրօնը հազար ու մի դրկանքներով։ Ինչումն էր գաղտնիքը։ Մի պատասխան միայն կարող էր լինել. հովիւնների անպարտանաշութեան և հօտի անխնամութեան մէջ։

Դատապարտելի էր կղերի վարքը գէպի ժողովուրդը, սակայն աւելի դատապարտելի էր այն ոգին, որ նա մտցրել էր մեր կեանքի մէջ. տիրապետական տեխնով բռնուած՝ նա կրթել էր աղջը կղերական իդէալներով. օրօրելով նրան հնութեան աւանդներով։ Նա շղթայել էր մաքերը և գիտակցաբար խեղդում էր քաղաքացիութեան ամեն մի արտայայտութիւն հասարակութեան մէջ, Հայ աղջասէրը չէր ճանաչում հայութիւն արտաքոյ Հայաստանեայց եկեղեցւոյց և պնդում էր, թէ մեր աղջը կրօնական համայնք է, թէ եկեղեցին և աղգութիւնը մի գաղափար է. սա մի սկզբունք էր, մի անխախտ ուսմունք նրա աչքում։ Նա չէր ընդունում այն հայեացքը, որ ժամա-

նակն առաջացնում է կեանքի նոր ձեեր, որ որոշ պատմական հանգամանքներում ազգայնութեան զաղափարը կարող է ստանալ նոր կերպարանք:

Այդ միակողմանի դաւանանքի դէմ զինաւորւում է Ս. Նաղարեանցը իր մաքի ամբողջ զօրութիւնը. նա չի կարող մի ազգի հոգևոր գոյութիւնն ամփոփել այդպիսի նեղ շրջանակների մէջ. նա ասում է, թէ հայկական եկեղեցին ազգայնութեան տարրերից մէկն է և ոչ սրա միակ մարմնացումը, թէ կրօնը ազգի համար է և ոչ ազգը կրօնի համարաց իրաւ, եկեղեցին եղել է և պիտի լինի ազգային մեծ հիմնարկութիւն, բայց նա չի կարող բովանդակել իր մէջ ազգի բոլոր իդէալներն ու ձգտումները. նա եղել է մեր հոգևոր դաստիարակը և միշտ էլ կը կատարէ իր վսեմ գերը, բայց որոնել միայն նրա մէջ ազգայնութեան բոլոր նիւթերը՝ նշանակում է մոլորուել և չը հասկանալ ազգերի պատմութեան ընթացքը, Մարդկային մոքի փայլուն նուաճումները գիտութեան զանազան ճիւղերում այնքան մեծ են, որ եկեղեցին անկարող է ամփոփել իր մէջ մեր առաջադիմութեան համար անհրաժեշտ բոլոր մնունդները:

Ցաւալի էին կղերի տիրապետութեան հետեանքները: Վատ էին կրթել հովիւները իրանց հօտը, այդ ոգւով տողորուած անկարելի էր առաջադիմել. լոկ կրօնական իդէալներով անհնարին էր գրաւել մի կայուն տեղ ապագայ ունեցող ազգերի շարքում կղերական աշխարհահայեացքն արգելում էր առաջադիմութեան. հոգեառականութիւնն իր գերում վաղուց գաղարել էր կենառունակ գործօն լինելուց. ժամանակը պահանջում էր մշակել նոր իդէալներ. Պէտք էր թօթափել կղերի ինամակալութիւնը, ազատուել նրա լծից և լուսաւոր քաղաքացիների միահամուռ գործակցութեամբ հոգալ ազգային կարիքները և նպաստել քաղաքացիական կեանքի զարգացմանը: Այս գիտակցութեամբ է սպառազինուում Ս. Նաղարեանցը կղերի դէմ, որ ծէսը պաշտամունք էր դարձել, անշարժութիւնը՝ ուստոնք, իսկ քրիստոնէական վեհ վարդապետութիւնը՝ մի գործիք՝ տիրապետելու մտքերին և ազգային վիճակը իր ձեռքում պահելու հուան եռանգով է մաքառում նա այն ազգասէրների դէմ, որոնք ազգի փրկութիւնը տեսնում էին միայն լուսաւորչական եկեղեցու մէջ և մոլեսանգութեամբ հալածում էին ուրիշ դաւանութեան պատկանող հայերին. լինելով ճշմարիտ քրիստոնեայ, խանդակառ սիրով վերաբերուելով մայրենի եկեղեցուն՝ նա ջանում է կրթել հասարակական միագը համբերողութեան գաղափարով, Խնչպիսի սրտմտութեամբ պախարակում է նա

այն ֆանատիկոս հայերին, որոնք տմարգարար չէին թոյլատրել թաղելու մի բողոքական հայի զիակն իրանց գերեզմանատանը: Տիրահոչակ դէպքը պատահում է Պօլսում: Մեռեալի ազգականները, մերժում ստանալով ազգակիցներից՝ դիմում են անդիմական դեսպանին և նրա օգնութիւնը հայցում: դեսպանը միջամտում է, բարեխօսում է տաճիկ կառավարութեան առաջ, ապա սրա զօրքի և զէնքի ոյժով թաղել է տալիս արդէն կազմալուծուած դիակը: Այս դէպքը խորապէս խոցում է Ս. Նազարեանցի սիրտը. նա պնդում է, որ մեր եկեղեցին միշտ համբերող է եղել և միայն նրա անարժան սպասաւորները հոչակում են նրան մոլեռանդ, պնդում է նաև, որ հայը միշտ և ամեն տեղ հայ է, ինչ կրօն էլ դաւանում լինի նա:

«Պիտոյ է թողուլ,—ասում է նա,—նեղ և փոքրողի կրօնական հայեցուածք, պիտոյ է հասկանալ, որ ֆանատիկոսութիւնը մնե արգելք է ազգային լուսաւորութեան և կրթութեան ձանապարհի վրայ... դաւանաբանութիւնը չէ բրիստոնէական կրօնի իսկութիւնը, քրիստոնեան կամակորուելով այդ հիմքի վրայ, .միշտ կը մնայ իւր ընկերին ատեցող, թշնամի և հալածող»:

Սարսափահար է անում կղերականներին այս համարձակ հայեցքը: Խայթուած պահպանողականները ոտքի են կանգնուում յանգուղն գիտնականի դէմ, նրանց թարգման լրագիրը՝ «Մեղու Հայաստանին», «Կոունկը» և «Ճուաքաղը» հոչակում են նրան «զաւաճան», «հերեւտիկոս» և «զութերական»: Սրտմառողների զլուխ է կանգնում Յ. Զերքեղեանցը, որ յայտնի էր իր յարձակումներով Ս. Նազարեանցի վրայ. նա դիմում է բողոքազրով Մատթէոս կաթողիկոսին, մատնացոյց է լինում «իսուլվարը» հրապարակախօսի հակաքրիստոնէական ուղղութեան վրայ, և աղերսում է նրանից գաղաքեցնել տալ «Հիւսիսափայլը», ինչպէս մի հակազդային ամսագիր:

Բողոքատուին համամիտ կաթողիկոսը աշխատում է մարմաւոր իշխանութեան միջոցով փակել «Հիւսիսափայլը», բայց այդ չի աջողւում. այն ժամանակ նա վշտացած տարօրինակ հալածանք է սկսում չարաբաստիկ ամսագրի դէմ, կոնդակներ է ցրւում ամեն տեղ, բանագրում է նրան և հրաման է արձակում բաժանորդ չը գրուել հերետիկոսական թերթին: Ազգի հոգուապետը իջնում էր բարձր գահից և, ներշնչուելով բնագալական ատելութեամբ դէպի նոր գաղափարական հոսանքը՝ ջանում է իսպառ խեղդել ճշմարտութեան ձայնը. ազգի ընտրելը, ամենայն հայոց կաթողիկոսը, որ պիտի հանգստացնէր հասարակական խիղճը, հալածում է մարդասիրութեան և համբե-

բողութեան զազափարը, սակայն... նա բնական արտայայտիչ էր իր դասակարգի և այն մարդկանց, որոնք դիմուլ էին իր օգնութեան:

Հասկանալով այս ճշմարտութիւնը և գիտակցելով իր սկսած դատի հիմնաւորութիւնը, Ս. Նազարեանցը զինաթափ չի լինում հակառակորդների առաջ. նա լայն սիրտ տղամարդ էր և արհամարհում էր թշնամիների «սև բամբասանքը»: «Մեր եղբարքը», —ասում է նա, «կամենում են ինձանից գովասանութեան քաղցր մեղք, բայց ես, միտ գնելով նոցա ջերմախտութեանը՝ կարող եմ միայն տալ նոցա դառն խինին, և այս էր նոցա փրկաւէտ ճարն ու գեղը»:

Սիրելի չէր այս մարակող ուղղութիւնը հասարաւիւթեան մեծամանութեանը. ոչ միայն կղերը, ազդասէրափրացուները, այլ և հայ փողաւորը ատում էր ռհերետիկոս հրապարակախօսին, որ համարձակում էր մերկացնել իր գծուծ կերպարանքը: Փողաւորը սովոր է, որ իրան խունկ ծխեն, մեծ մարդ ճանաչեն, իսկ Ս. Նազարեանցը ցոյց է տալիս, որ հայ հարուստը չունի հոգեոր պահանջներ, միայն «զանձեր է դիզում», որ նրա «սիրտը քար է, և անմատչելի թշուառութեան ձայնին», որ նա անառակ է, շոայլ, մնափառ, մարդատեաց, կեղեքիչ թոյլի, հզօրի առաջ քճնող, առանց առաքինութիւնների պատիւ պահանջող. «Հարստականքը ոչ թէ քաջակերող և ձեռնտու չեն հայկական գիտութեան, այլ դրականապէս թըշնամիք, հալածողք, և ինչու, որովհետև այդ ասիացիք նայում են գիտութեան վերայ, որպէս մի անպատիւ աղախնու վերայ, որի պաշտօնն է կատարել նոցա կամքը, անուշ խունկեր ծխելով նոցա քթին, գովասանելով նոցա չկործած սխրագործութիւնքը»:

## V

Ս. Նազարեանցի ժամանակակից հայ հասարակութիւնը ներկայացնում էր մի անգայն, խաւար ամբոխ, որ չէր իմանում, թէ ինչ է կատարւում լոյս աշխարհում: Դառնադին պատմական անցքերը դրոշմել էին նրա վրայ յուսահատութեան կնիքը. գոյութեան դաժան կռւում հասարակակցութիւնը (օբզեւենութեան) տեղ էր տուել անհատականութեան, որ առանձնապէս զարգացել էր մեր մէջ. հայը մոռացել էր ընդհանուր շահերը և լիովին նուիրուել էր իր անձի պաշտպանութեան և ապահովութեան. չը կար գործունէութիւն հաւաքական ոյժերով, թոյլ էր ազգային ինքնանաշչութիւնը:

Գրականութիւնը մի հեռաւոր, կղզիացած աշխարհ էր, որ վարժուում էր չոր ու ցամաք, վերացական դատողութիւններով աստուածաբանական նիւթերի մասին և արտադրում էր գրքեր մի քանի տասնեակ ընթերցողների համար. չը կար կեանքի և գրականութեան մէջ այն աւընչութիւնը և մերձաւոր կապը, որոնք առաջացնում են նրանց փոխադարձ համազդեցութիւնը. Պէտք էր մօտեղնել միմեանց այդ երկու, իրար օտար աարբերը, բանալ նրանց մէջ հաղորդակցութեան կամուրջ. պէտք էր զարթեցնել բաժան-բաժան «ես»-երի գիտակցութիւնը և հաստատել նրանց մէջ բարոյական կապ, ներշնչել պարտաճանաչութեան զդացմունք գէպի ազգային մարմինը, գէպի ծնող հայրենիքը, պէտք էր, վերջապէս, յիշեցնել, որ բացի անձնական բարօրութիւնից կայ աւելի վեհ հասկացողութիւն՝ աղդային, հասարակական շահ:

Լրջամիտ Ս. Նազարեանցը պարզ հասկացել էր այս կարիքները. նա համոզուած էր, որ բաւական չէ ճահճացած կեանաթի բորբոք մաքրել սպունգով, ինչպէս անելիս են հղել մեր լուսաւորութեան հոգատարները, այլ հարկաւոր է անցկացնել նրան քաղաքակրթութեան հրով, հարկաւոր է վերանորողել հնացած հասկացողութիւնները ազատարար գաղափարներով. նա լաւ գիտէր, որ հայը չի կարող պաշտպանել իր ազգային կերպարանքը, դնել իր համաստ լուսան քաղաքակրթութեան գանձնակի մէջ, եթէ չընդարձակի իր մտքի ասպարէզը, չը բաղիք վաստակաւոր Եւրոպայի դռները և չընթանայ նրա հարթած ճանապարհով. նա փափագում էր, որ հայը աշակերտի Եւրոպային, իւրացնի նրա ոկու ձգտումները, հայացնի նրա մտքի արդասիքները. «պիտոյ է ինսամեցնել Եւրոպականութիւնը և հայկականութիւնը», ահա այս էր նրա հաւատոյ հանգանակը:

Նրա արշաւանքի էութիւնը հնի գէմ, նրա կոչի իմաստը գէպի Եւրոպան այն էր, որ հայը չը կղզիանայ առաջաւոր ազգերից, ըմբռնի ժամանակի առաջադիմական ողին, ներազգութ հանրամարդկային լուսաւոր գաղափարներով. նա ուզում էր, որ Եւրոպան կարապետող ուսուցիչ լինի և ոչ ճնշող, աղդային առանձնայատկութիւնները ունչացնող տարր:

Արևմտեան հասարակութիւնները վաղուց թօթափել էին իրանց ինսամականների լուծը. նրանք վաղուց իւրացըել էին հասարակական ինքնօգնութեան բարձր սկզբունքը. համերաշխ ընկերակցական գործունէութիւնը նրանց կեանքի բնորոշ յատկութիւնն էր. դա մի շարժիչ ոյժ էր, առաջադիմութեան կենդանի գործօն. Ս. Նազարեանցը առաջինն է արծարծում մեր

մէջ այս կարևոր խնդիրը. նա ասում է, թէ «մարդուս մեծութիւնը և կարողութիւնը ընկերութեամբ մէջ է, մարդս միայնակ ոչինչ է, իսկ ընկերութեամբ ամենակարող է, իսկապէս հրաշագործ», թէ «աշխարհիս բոլոր բարիքները առաջացել են միաբան գործակցութեամբ և փոխադարձ օգնութեամբ»: Այս համոզմամբ նա յորդորում է հասարակութիւնը հիմնել «մի ընդհանուր-հայկական ընկերութիւն հայերի նիւթական և բարոյական կեանքը բարեկարգելու համար»: Ընկերութիւնը պիտի ծառայէր գրականութեանը, «ձաղկեցնէր մայրենի լեզուն», հըրատարակելով ինքնուրոյն գրուածքներ և ընտիր թարգմանութիւններ եւրոպական լեզուններից: Նա պիտի «բանար ազգի չքաւոր զաւակներին պատուաւոր հացի և ապրուստի ճանապարհ, ծանօթացնելով նրանց արուեստներին, երկրագործութեան և պատրաստելով պօլիտեխնիկոսներ, հմուտ վաճառականներ, գործակատարք և գրապահք»: Նա պիտի ճնպաստամատոյց լինէր քանքարաւոր համալսարանաւարտներին կատարելագործվելու Եւրոպայում, օգնէր չքաւոր ուսանողաց»:

Սա առաջին գիտակցական փորձն էր հանելու հայերին անջատական գոյութեան կախարդուած շրջանից և կազմելու ինքնախնամ հասարակութիւն: Աս մի բուռն քարոզ էր գուրս գալու հրապարակ, կազմակերպելու ինքնուրոյն և գործունեայ հասարակական մարմին, որ պիտի հոգար ազգային պէտքերը, կանոնաւորէր կրթութեան գործը՝ մեկենասներից և պատահական բարերարներից անկախ: Ինքնազործունէութեան այս գեղեցիկ միաքը չիրագործուեց իր ժամանակին: հասարակական իրէալից զուրկ հայը չը հասկացտ նրա խորհուրդը:

Նոյն վիճակն է ունենում «Կենտրոնական գլոբանոց» հիմնելու խնդիրը, որ մեծ աշխոյժով յարուցել էր մեր հրապարակախօսը իր ամսագրի էջերում, ապացուցանելով նրա անհրաժեշտութիւնը իբրև մի հիմնարկութիւն, որ «պիտի լինէր մայրծնդաբան միւս դպրոցների», մատակարարող ընդհանուր կըրթութեան: Նա մանրամասն մշակում է նրա ծրագիրը, խօսում է աւանդուելիք առարկաների, ուսուցիչների և սրանց տրուելիք ուօնիկների մասին: ստկան այս միտքն էլ մի անիրագործելի երազանք էր մեր անուս հասարակութեան մէջ:

## VI

Ժամանակակիցները, ինչպէս տեսանք, իսկթ աչքով էին նայում Ա. Նազարեանցի վրայ և համարում էին նրան ըմբուտ քաղաքացի, որ առ ոչինչ է դնում եկեղեցին, ազգային աւանդութիւն-

ները։ Դա բնական էր։ Նոր հոսանքի մարդը չէր կարող դուր գտն հսութեան պահապաներին, որովհետև նա չէր գոհում ճշշ-մարտութիւնը նեղ, միակողմանի ազգասիրութեան եւ համար-ձակ դատավիւտում էր այն, ինչ որ համաձայն չէր իր իդէալ-ներին։ «Գիտառութեան առաջ ոչինչ կշիռ չունի նեղսիրտ հայրե-նասիրութիւնը. զիտութեան խնդիրն է վերահասու լինել ճշշ-մարտութեան, թէև դա պիտոյ է կործանէր մի քանի քաղցր երազներ։ Նա վստահանում է անգամ յանդիմանել հինգերորդ դարի հոգեսրականութիւնը, որ աւելի կրօնն է պաշտպանել, քան բուն ազգը։ Նա հաւատացած է, որ առանց ինքնազնու-թեան չէ կարող լինել առաջադիմութիւն, որ կեանքը մի ան-ընդհատ փսփոխութիւն է և ինքնաճանաչութիւնը մի տեսակ ինքնադատատառն է։

Ս. Նազարեանցի քննադատական ուղղութիւնը զրգոել էր աւանդապահների կոյր թշնամութիւնը և չէր վայելում հա-մակրութիւն հասարակութեան ստուար մեծամասնութեան մէջ։ Նա ունէր թերութիւններ, որոնք զրկում էին նրա գոր-ծունչութիւնը կենդանութիւնից և աւելի բեղմնաւոր լինելու հնարաւորութիւնից։ Նա չափազանց տեսական հրապարակա-խօս էր, կարինետային մարդ, որ անծանօթ էր իրական կեան-քին։ Սաւառնելով սկզբունքների և տեսական մտածութիւննե-րի աշխարհում՝ նա բարձրից էր զիտում մեր իրականութիւնը, համեմատաբար քիչ էր զբաղւում ներքին խնդիրներով, յաճախ չէր հասկանում հասարակութեան հոգեբանութիւնը և լուռ էր այնպիսի դէպքերում, երբ նրա ազգու խօսքը պիտի բարձրա-ձայն հաշէր, ուղղութիւն տար հասարակական կարծիքին։ —Տա-րօրինական է թւում մեզ նրա կատարեալ լուսութիւնը, երբ վախճանում է ներսէս V նշանաւոր կաթողիկոսը 1860 թւ-ւականին հաստատում է տաճկահայոց սահմանադրութիւնը։ Հայութեան մեծադոյն մասը ստանում է որոշ քաղաքացիական իրաւունքներ, իսկ գիտնական հրապարակախօսը չի նկատում մեր կեանքի այդ խոչը երեսոյթը։ Զի գրաւում նրա առանձին ուշադրութիւնը նոյն իսկ Զէյթունի ապատամբութիւնը, հայոց արիւնով ողողուած Մարաշը, մինչդեռ օտարներն անգամ կա-րեկցարար էին խօսում հայ նահատակների մասին և ջատագո-վում էին ազգատասէր ապստամբների ձգտումները...»

Տեսական էր նա իր ամսագրի նիւթերի ընտրութեան մէջ։ Համարելով լեզուն ազգայնութեան ամենազօրեղ գործօն՝ նա գովելի եռանդով աշխատում է կոկել, մշակել նրան, մտքի կենդանի գործիք դարձնել։ կամենալով ճոխացնել մեր աղքա-տիկ գրականութիւնը՝ նա ձեռք է զարկում թարգմանութեան

առանց խիստ ընտրողութեան, անտես է անում եւրոպական և ուսւ գրականութեան ընտիր երկերը, մինչդեռ որանք կարող էին միայն նպաստել առողջ մտքերի տարածման հասարակութեան մէջ, գրականական ճաշակի և լեզուի զարգացման էեր մոնուվի «Դե» վիպասանութեան տաղանդաւոր թարգմանիչ Սաղաթեանը մասամբ նկատում է այդ և ցաւ է յայտնում, որ «Հիւսիսափայլի» էջերը փակ են ուսւաց բանաստեղծական և ուսումնական մատենագրութեան համար Լցուած բուռն ցանկութեամբ՝ կրթել իր ռասիայի եղբայրներին, նազարեանցը թարգմանում է բազմաթիւ գիտնական յօդուածներ (գերմաներէնից), թարգմանում է «Կիկերոնի ճառը դաւադիր Կատիլինայի դէմ», անբովանդակ արենելեան վէպեր («Եէլիս և իւր դուստրը», «Օտարութի հարսնախօսութիւն»), լցնում է իր թերթը շատ զբժւարամարս զրուածքներով, բայց չի մտածում այն մասին, թէ որքան այդ նիւթերը հետաքրքրական են և մատչելի իր ընթերցողների համար. նա ատենաբանում է ամենայն բարեխղճութեամբ, բայց չի ճանաչում իր լսարանը, չի նախատեսում նրա տարակուսանքներն ու հարցերը, նրա իրական պահանջները:

Իր «Հայոց պատմութիւն» աշխատութեան սկզբում նա ասում է. «ով որ կամենում է ծանօթանալ իր ազգի որպիտութեանը, պարտական է ուսանել նրա անցեալը, որի մէջ զրած է և իւր յատուկ ներկայի բանալին... մինք պիտոյ է ծանօթացնենք մեր սիրելի ազգը իւր ազգային պատմութեան հետ, անաշառապէս մերկացնելով նրա առջև անցած-գնացած օրերի պատկերը, որպէս հարկաւոր ուսում, փրկաւէտ խրատ և յանդիմանութիւն մեզ, միայն թէ կամենայինը մեր նախահարց փորձերից իմաստնանալ և խելացի կերպով ընտրել ապագայի ճանապարհը...»: Եւ որքան մեծ գործ կատարած կը լինէր գիտնական հրապարակախօսը, եթէ նա տար մեր անցեալի ճշգրիտ պատկերը, որքման դաստիարակիչ նշանակութիւն կ'ունենար դա ընթերցողների, ուսունող սերնդի համար. սակայն մեր գիտնականը չի կատարում իր խոստմունքը և չի հասցնում պատկառելի գործը իր վախճանին:

Ցափշտակուած ընդհանուր սկզբունքային իմպիրներով՝ նա չի խորասուզում մեր իրականութեան խորքերը. նրա հրապարակախօսութիւնը չի ընդգրկում մեր կեանքի բոլոր կողմն.. ըը. նա ուսուցանում է հասարակութեան բարձր խաւերը՝ հոգեորականութիւնը և հարստականներին, բայց հազիւ է յիշում բուն ժողովրդին, նոյն իսկ քիչ է ճանաչում նրան. նրա կարծիքով, «հայոց ազգը համարեա բոլորովին վաճառական է,

ունի միայն նիւթաւոր-առևտրական կապակցութիւն օտարի  
կամ իւր ընկերի հետ։ նա ոչ մի փորձ չը փորձեց որ և է կապ  
հաստատել խաւարի և թշուառութեան մէջ հեծող ժողովով  
հետ դաւառը իր հարիւրաւոր կարիքներով, հայ զիւղացին և  
արհեստաւորը իրանց նիստ ու կացով, անտեսական վիճակով,  
իրանց յոյզերով և մատածունքներով չը գրաւեցին նրա պատ-  
շաճաւոր ուշադրութիւնը։ Տեսական հրապարակախօսը, շօշա-  
փելով ազգային լուսաւորութեան հարցը՝ բաւականանում է  
մի «Կենտրոնական դպրանոյով», բայց նեղութիւն չի քաշում  
արծարծել ժողովրդական դպրոցների խնդիրը, որի բարերար  
լուծումը կը լինէր ամենայուսավի հիմքը ազգային առաջադի-  
մութեան համար։ նա միայն հարեւանցի կերպով ասում է, թէ  
հայկական կեանքի վերանորոգութիւնը պիտոյ է սկսանի ժո-  
ղովրդական դպրոցից, որ արմատն է ամենայն ազգային լու-  
սաւորութեան։

Չը նայած այս թերութիւններին՝ Ա. Նազարենանցը մի խո-  
չոր ոյժ էր մեր նորածիլ գրականութեան մէջ։ նա հիմք դրեց  
լուրջ հրապարակախօսութեան, խորտակեց գրաբարի գերիշ-  
խանութիւնը, պաշտպանեց աշխարհաբարի քաղաքացիական  
իրաւունքները և մեծ զարկ տուեց նորագոյն գրականութեան  
զարգացման։ նա ոռւսահայոց կեանքում առաջինն էր, որ քա-  
ջութիւն ունեցաւ բողոքել կերպական աշխարհահայեցքի, կրօ-  
նական մոլեունդութեան դէմ և յայտարարել «համբերողու-  
թեան, առանց կրօնի խորութեան» բարձր սկզբունքը։ նա  
բացեց մեր առաջ արեմտեան մտքի լայնատարած ասպարէզը,  
դուրս բերեց մեր հասարակական միտքը նեղ կրօնական մըթ-  
նոլորտից և ուղղեց նրան դէպի ինքնաճանաչութեան և ինք-  
նագործունէութեան գաղափարը։

Լցուած անհուն սիրով դէպի իր հայրենիքը՝ Նազարենանցը  
լայն կերպով էր հասկանում նրա բարօրութիւնը։ Կարծ ասած,  
նա մի գործիչ էր, որ ներշնչուած էր իդէալական ձգտումնե-  
րով և ունէր անյողդողդ համոզմունքներ։ նա ուղղամտութեան  
և անհունիրութեան կենդանի տիտար էր։

Ժամանակակիցները հալածեցին նրան, բայց յաջորդ սե-  
րունդը բերկրալից սրտով ընդունեց նրա գաղափարները, և  
այսօր հասարակութեան լաւագոյն մասը, երախտագիտութեամբ  
լցուած, համարում է նրան մեր առաջադիմութեան աւագ դրօ-  
շակակիր, ոռւսահայերի հրապարակախօսութեան նահապետ։